



# ՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



ԱՐՓԵՆԻԿ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

## 300-ԱՄՅԱ ԳԵՂԱ ՀԱՅԱՔԱՂԱՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԳԻՐՔ-ԱԼԲՈՄ

Բոլսարեստի «Արարատ» հրատարակչությունը 2002 թվականին տպագրել է մի ժողովածու՝ Ավիրված Տրանսիլվանիայի Արմենոպոլիս՝ Գեղաքաղաքի պատմությանը և մշակութային ժառանգությանը: 11-րդ դարում, Բայկական պետականության անկումից հետո, Անիից բնակչությունն արտազարթել է տարբեր ուղղություններով: Հայերի մասսայական արտահոսք Անիից կատարվել է օան 1239 թ.: Արտագաղթածները հաստատվել են Ղրիմում և 4 դար մնալուց հետո ստիպված են եղել զարթել Լեհաստան, այդուղից՝ Մոլդավիա: Մոլդավիայից տեղահանված 3 հազար հայ ընտանիք 1672 թ. բնակություն են հաստատել Տրանսիլվանիայում:

Միխայիլ Ա. Ապաֆիի (1661-1690 թթ.) թագավորության տարիներին շուրջ 15 հազար հայեր բնակություն են հաստատել Բիստրիցիա-Նոստ, Կեռորկեն, Ֆրունոսա-Չուր քաղաքներում: Երկրի տնտեսական զարգացման շահերից ելնելով՝ թագավորը հովանավորում էր հայերի տարբեր առևտրական ձեռնարկումները՝ հրանց տալով մեծ արտոնություններ: Շատ չանցած հայերը Տրանսիլվանիայում տնտեսական կարևոր լծակներ են ձեռք բերում: Բնականաբար, տնտեսապես հզոր հայկական համայնքը ձգտում էր իր ներքին համայնքային իրավունքների մեծացման և միաժամանակ պայքարում էր ազգային ինքնության պահպանման համար: Այդ իրավունքների ձեռքբերմանը համարժեք՝ երկրի իշխանությունները ստիպեցին հայերին դավանափոխ լինել: Պարտադրված դավանափոխությունը համար դիմադրության է համեմիպել: Պահանջվել է շուրջ 6 տարի (1686-1690 թթ.), որպեսզի հայազգի կաթոլիկ միսիոներ Օգտենտիոս Վերգարյանը՝ Վերգերեսկուն, Վատիկան ներկայացնի զեկուցազիր 30 հազար հայերի դավանափոխման մասին: 1690 թ. դավանափոխ եղած հայերը պահպանեցին եկեղեցական արարողությունները հայերներով կատարելու և եպիսկոպոս ընտրելու ու ամուսնացյալ քահանա ունենալու իրավունքները և այլն:

Կաթողիկ հայերը փոխարժենը ստանում էին գերազանցապես հայերով բնակեցված քաղաքներ ատեղծելու իրավունք: Դրանցից առաջին՝ Արմենոպոլիս-Գեղայի շինարարությունն ավարտվել է 1700 թ., երկրորդին՝ Տումպովեանին՝ 1733 թ.:

Հայաշեն Գեղան ստեղծվել է հասուն հատակագծով (ճարտ. Ալեքսանդր) նախօրոք 12 հազար ֆլորինով գնված 1 քառ կմ տարածքում (Մարտինուոզի բերդից հարավ): Կառ Զ-Ա քաղաքին շնորհել է «Արտոնայլ ազատ քաղաք Արմենոպոլիս» տիտղոսը 1786 թվականին, 1786 թ. Խոսհիք Բ թագավորը՝ «Ազատ թագավորական քաղաք Արմենոպոլիս» անունները: 1867 թվականից 1918 թվականը հայաքաղաքը կրում էր Բունգարական անվանում՝ «Ազատ թագավորական քաղաք Սամոշույովար»: 1918 թ. հայաքաղաքը ստացավ Գեղան անվանումը:

Ստեղծման օրից քաղաքն ուներ իր ինքնավարությունը՝ «Ժողովրդական հավաք» օրենսդիր մարմնով, վարչական ղեկավար քաղաքապետով և իր երկային արձիվ զինանշանով: 19-րդ դարի վերջին քաղաքում գործում էր 10 եկեղեցի, 9 դպրոց, մեկ վարժարան և մի լիցեյ: «Նոր հայրենիքում» տրամադրված ատեղծել են մի ուրուն քաղաքային մշակույթ, ավանդույթների մի հետաքրքիր համադրում ազգային և տեղականի:

Սակայն 168 տարի պահանջվեց (1841 թ.), մինչև տրամադրված անաշվեցին երկրի լիհրավ քաղաքացիներ: Երկու դարից ավելի Գեղան ղեկավարում էր տրամադրված ահայերի ազգային ինքնահասատումն ոժվարին զործը: Այժմ այդ ավանդույթները շարունակում են Որոշմինիայի Հայոց Միությունը: Այդ Միության ջանքերով և Որոշմինիայի կառավարության օժանակությամբ 2001 թ. տոնվել է Գեղայի հիմնադրման 300-ամյակը, բացիկ «Հայ մշակույթ Գեղայի մեջ» ցուցահանդեսը և, վերջապես, ցուցահանդեսին մասնակցող գիտնականների ուժերով հրատարակվել «Գեղայի հայկական մշակույթը և արվեստը» գիրք-ալբոնը, որում ամփոփված են Արմենոպոլիսի հիմնադրման, քաղաքաշինությանը, կերպարվեստին, կիրառական արվեստին, արխիվային հումքներին և այլ հարցերին նվիրված հետ հոդվածները գրված են անգերենով, կից ունեն հայերեն թարգմանությունը և կարդացվում են մեծ հետաքրքրությամբ:

Տրամադրված ահայերի՝ մասնավորապես Գեղայի պատմությանը նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունը (հայերենով) Վիեննայի Միջիթարյան միարանության ամերամ, ծնունդով գեղացի, Գ. Գովիիկյանի «Տրամադրվածի Հայոց մետրոպոլիս կամ Ակարազիր Կեղալ հայաքաղաք» աշխատանքն է: Մինչ այդ Լուկաշի Գրիշտովը 1859 թ. հեղինակել էր Տրամադրվածի հայոց պատմությունը: Առանձին հոդվածներով Որոշմինահայերի պատմության տարրեր շրջաններին է անդրադարձել նաև Ս. Քոլանջյանը<sup>1</sup>:

Այս գիրք-ալբոնը փորձ է՝ հանրագումարի բերելու տրամադրված ահայերի անցած դրժվարին, բայց մեծագույն ձեռքբերումներով հարուստ ուղիմ: Գեղայի հիմնադրման պատմությունը, պատմական պատմությունը պատմական պատմությունը, պատմական պատմությունը պատմական պատմությունը:

<sup>1</sup> Գ-Ավրիլյան Գ. Դրանսիլվանիո հայոց մնարության կամ նկարագիր Կնոջա հայաքաղաքի, Վիեննա, 1886 թ., Ս. Քոլանջյան. Տրամադրվածի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար (ԺԷ-Ի դդ.), «Էջմիածնի», 1964, թիվ 12, 1965, թիվ 1-7, 1966, թիվ 2: Գրվել են նաև օպարալսոր, մասնավորապես ոտմիններն և հովեզարերն ուսումնասիրություններ:

բայրության փաստաթղթի, դավանակոխման, հայ Եպիսկոպոսարանի վերահաստատման (1930 թ.) և մերօրյա հայապահպանության հարցերին է Ավիրված Նիկոլաև Կազղովիչի «Հայաքաղաք Կեռլայի պատմության Եջերէն» հոդվածը:

Քլուժի, Գեղլայի, Բիստրիցայի քաղաքապետարանների արխիվներում այսօր պահպատճեն են հայերենով, իտալերենով, հունգարերենով և գերմաներենով գրված հազարավոր վավերագրեր: Դրանք տարաբնույթ են և հարուստ տեղեկություններ են պարունակում քաղաքային կյանքի տարրեր ոլորտների մասին և դժբախտաբար քիչ են ուսումնասիրված: Ավելի քիչ կամ գոեթ չեն ուսումնասիրված հայերեն վավերագրերը: Ժողովրդագրական տեսանկյունից հետաքրքրություն է Աներկայացնում Գեղլայի հայ կաթողիկ համայնքի կնունքի, պասկի և մահվան 1857-1913 թթ. ծխամատյանների հարուստ հյութերը: Քաղաքի հիմնադրման, Կաշեգործների ընկերության, անդամների, կանոնադրության, այլ երկրների հետ հրանց թղթակցություններին, առանձին եկեղեցիների շինարարության, հայտնի ընտանիքների երկեղեցյան (լատին-հայերեն) փաստաթղթային ժառանգությանն է անդրադարձել Լ. Շերդանը «Հայերը Քլուժի զամարանի մեջ» հրապարակմամբ: Այս քաղաքապետարաններում պահպող հայերեն արխիվային փաստաթղթերը կարու են լուրջ և համակողմանի ուսումնասիրության:

Որումինհայում պահպող հայերեն ձեռագրերի, մասնավորապես Գեղլայի հայերեն ձեռագրական ժառանգությանը մենք ծանոթ ենք «Բանքեր Մատենադարանի» համեստում Ս. Քոլանջյանի հրատարակած ձեռագրացուցակից<sup>2</sup>: Հավաքածուում հետաքրքրություն են Աներկայացնում 14-րդ դարում ընդօրինակված ձեռագրերը, որոնցից մեկը գրված է Ղրիմում (թիվ 13), մեկը՝ Կիպրոսում, մյուս երկուսը՝ Տարոնում և Կիլիկիայում: Ահա Ղրիմից բերված այս Ավետարանների և այլ ձեռագրերի փոխառնչությանն է Ավիրված պրոֆեսոր Հեղմուտ Բուշհաուզենի գիտական խորությամբ աչքի ընկնող հոդվածը: Հայ միջնադարյան մանրանկարչական արվեստի գիտակ գիտականը մեկ առ մեկ անդրադարձել է ամեն ձեռագրի մանրանկարչի Ակարազարդման արվեստին, այդ Ավետարանների վրա Ակարչական այս կամ այն դպրոցի, մասնավորապես Ղրիմում ընդօրինակված ձեռագրի վրա մանրանկարչության Բարձր Հայքի, որոշ ձեռագրերի դեպքում, հակ բյուզանդական դպրոցի ազդեցության հարցերին: Հեղմուտ և Հայդե Բուշհաուզենները 20 տարուց ավելի զբաղվում են Ղրիմի հայ միջնադարյան մանրանկարչության և բյուզանդական արվեստի փոխազդեցության հարցերով: Այսօր հրատարակության է պատրաստ հրանց և արվեստագիտության դոկտոր Է. Կորիսմազյանի՝ Ղրիմի հայ մանրանկարչությանը Ավիրված մի հետաքրքիր ուսումնասիրություն:

Բուշհաուզեն ամուսնների հայագիտական գործունությունը միայն այս համագործակցությամբ չէ, որ իրականացվել է: Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առիթով հայտնի ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի հետինականացությամբ նրանք հրատարակեցին «Հշմիածնի Ավետարան»-ի գունավոր նմանահանությունը, որը Աներկայացված է ձեռագրագիտական և արվեստաբանական հետաքրքիր ուսումնասիրությամբ

<sup>2</sup> Ս. Քոլանջյան, Համարուր ցուցակ հայերեն ծնուագրաց Գևորգ հայաքաղաքի, «Բանքեր Մատենադարանի», 1969, թիվ 9:

(գերմաներեն, Գրաց, 2001 թ.)<sup>3</sup>: Նորանց իդեանց մասնակցությունն են բերել նաև Ս. Էջմիածնի զամանակի՝ Վիեննայում 2002 թ. «Հայաստանի ուսկին» վերնագրված ցուցահանդեսի կազմակերպմանը՝ գրեղով նաև ցուցահանդեսի կատալոգի «Հայերը Վիեննայում ու Հռոմեական հայությունում» և «Հայ արվեստը» բաժինները:

Գետական հետաքրքրություն է ներկայացնում նաև «Արմենապոլիս կամ Գեղարքի Բարոկո» (Նիկոլայ Սապու) նոդվածը, որը նվիրված է Գեղարք քաղաքի հատակագծին, շինարարական տարրեր շրջանների, մասնավորապես ճարտարապետական որոշ բարոկկոյով ստեղծված քաղաքային շինությունների ուսումնասիրությամբ: Առանձնապես հետաքրքրի են միահարկ քարաշեն երկու սենյակ, խոհանոցով և եռանկյուն ճակուտն ունեցող տաճիրով տիպային ազգային ավանդույթներով կառուցված քաղաքի վաղ շրջանի շինությունները: Քաղաքաշինության զարգացման հետ, շինարարական այս կամ այն արհեստներում հմտանում են և մասնագիտանում հայկական շատ ընտանիքներ: Այստեղ մեկ առ մեկ, փաստական հյուրթի հիման վրա, թվարկված են արդեն անվանափոխված շատ հայերի անուններ, որոնք իրենց ձեռքբերով են ստեղծել այժմ մեծ հիացմունք առաջացնող բնակելի շինությունները և հիմնադրել, բարոկկոյի մի նոր ողηղություն՝ տեղականի և հայկականի մի հետաքրքրի մինթեզ, որ հայտնի է «Գեղարքի ոճ» անունով:

Ինչպես ցանկացած կաթոլիկ հոգևոր շինություն, Գեղարքի թվով 10 եկեղեցիներն ունեցել են և այժմ էլ ունեն շենք հարդարանք, որմնանկարներ և տեղական արվեստով ստեղծված ոչ այնքան բարձր տեխնիկայով արված վրձնանկարներ: Դրանք ատեղծվել են հիմնականում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում: Այժմ, բացառությամբ Սուրբ Երրորդության տաճարում պահպող «Խօսցումը Խաչից» կտավի, թվով 13 հկարներ պահպում են Գեղարքի Պատմության թանգարանում: 18-րդ դարի գործերի հետինակները տեղի եկարիչներ են, որոնց մի մասի ինքնությունը հնարավոր կլինի պարզել միայն քաղաքականարանի հայերեն լեզվով գրված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո: Կտավները հիմնականում ազնվական հայերի դիմանկարներ են, համդիպում են նաև ազգային եկեղեցական թեմաներով կոմպոզիցիոն հկարները: Տրյատ թագավորն ու Գիղոդր Լուսավորչը և քրիստոնեության հաստատումը, Գրիգոր Լուսավորչի Ելառում Վիրապից, Մեսրոպ Մաշտոցը և գրեդի գյուտը, Հոկիսիմյանց կուլտերի պատմությունը:

Այս բոլոր գործերը արվեստագիտական հետաքրքրի եզրահանգումներով է ներկայացրել Լ. Դրկոյը «Գեղարքի հայ համայնքի հավաքածուի կտավակալի նկարները» հոդվածում: Վերջում տրվել է այլ նկարների համառոտ գիտական ցուցակը: Դրանք առաջին անգամ իրենց լուսանկարների հետ ներկայացվում են ընթերցողի ուշադրությամբ:

Գեղարքի պատմության թանգարանում է պահպում նաև հայկական գործվածքների և ձեռագործ աշխատանքների հավաքածուն, որոնց մեջ առանձնանում են եկեղեցական գործածության իրերը: Այդ իրերի, գործվածքների, գրանց վրայի հախչերի, զարդարությունների և ասեղնագործության տեխնիկայի ուսումնասիրությանը են վերաբերում գիրք-ալբոմում գտնավոր լուսանկարներով ուղեկցվող Ամենա Մարիա Սեկոնդի «Մանածագործական արվեստի նմուշները Գեղարքի Պատմության թանգարանի մեջ» հաղորդումը:

<sup>3</sup> Codex Etschmiadzin, kommentar, Graz, Austria, 2001.

Լուսանկարներում պարզորոշ նկատելի են, որ փորուրաբների, շապիկների, խովրերի, վականների և նկեղեցական հանդերձների մաս կազմող այլ գգեստամաներում առկա են Ընդհանրական Եկեղեցու վաղ շրջանի հանդերձանքի պահողությունները: Թեպես հայտնի է, որ քաղաքի հայ բնակչության հանդերձանքը շատ ավելի եվրոպական է եղել, քան ազգային, ցանկալի կլիներ նաև որպես հայ բնակչության հիստ ու կացի անքածանելի մաս հատուկ ուսումնասիրել նաև թաճարանի ֆոնդերում պահպող հանդերձանքի այդ նմուշները ևս:

19-րդ դարի հունգարական նկարչական արվեստի հայտնի գործիչներից մեկի՝ Շեմոն Հոլոշիի հայրենի քաղաքում իր կյանքի վերջին հինգ տարիների (1896-1901 թթ.) նկարչական գործունեության և վրձնած կտավների ուսումնասիրությանն է վերաբերվում Մարտին Եմելյի «Մարմորեցիան բարձունքները բազմության մեջեն» հրապարակումը: Մյունիսնում իր նկարչական արվեստը կատարելագործած այս ինքնատիպ արվեստագետի երակներում հայկական արյունը է հոսել: Մյոնիսները Գեղալից հունգարական հետափոխության ժամանակ տեղափոխվել են Հունգարիա, որտ և 1857 թ. Սիկեթու Մարմացիեց քաղաքում ծնվել է Շիմոնը: Մյունիսնում երկար տարիներ աշխատած վարպետը կյանքի վերջում հաստատվում է ծննդավայրում և ստեղծում զեղարվեստի բարձրարժեք գործեր:

Ինչպես ցանկացած ուսումնասիրություն կամ զիրք, այնպես էլ «Գեղալի հայկական մշակույթը և արվեստը» հոդվածների ժողովածուն զերծ չէ թերություններից: Ամենից առաջ դա հոդվածների հայերեն թարգմանությանն է վերաբերում, որն իր հերթին պատճառ է դառնում իմաստային սխալների: Ահա դրանցից մի քանիսը. «Ես հայերու արտագաղթը դեպի Միջին Ասիայի Կիլիկիա երկրամասը» (Էջ 29): Միջին Ասիա, Մերձավոր Արևելքի փոխարեն, և կամ «1375 թ. արարական (իմա՞ մամլուկների) արշավանքների հետևանքով, այստեղ ևս հայերը կորցրեցին պետականությունը, որը տևեց շուրջ 544 տարի» (Էջ 30): Այնուհետև «Հայ Եկեղեցին ստեղծեց իր սեփական դիրքորոշումը այդ հարցի կապակցությամբ, ըստ որու Հիսուս եղած է «միակ երկրնությունը» և այս բնույթի նմանօրինակ վրիպակներ: Բացի այդ, թեև նյութերին ուղեկցող լուսանկարները խիստ շահեւկան են և օգտակար նյութի ներկայացման առումով, սակայն տպագրական բավարար որակով չեն հրատարակվել:

Այս ամենը սակայն չի նսեմացնում ժողովածուի արժեքը և այն պետք է համարել հաջող փորձ տրամադրվածահայերի երեքմարդարամայա պատմության մի հատվածի՝ 17-19-րդ դարերի պատմության ամբողջական հանրագումարը: Այն խտացված ներկայացնում է մի քաղաքի՝ Գեղալա հայաքաղաքի երեսների ինքնավարությունը, աշխույժ, տնտեսական, հոգևոր, մշակութային վերելքը, այն իրողությունը է, և ոչ հուշ հայկական ինքնություն ունեցող կյանքի: